

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ



Կազմեց և պատրաստեց՝
Քեօլի Քայ Մշակութային Միութիւն (2002)

Նախաբան.....	3
Վանկ եւ տողադարձ.....	5
Ը ձայնաւորի ուղղագրութիւնը.....	6
Ե եւ Է ձայնաւորի ուղղագրութիւնը.....	7
Ո եւ Օ ձայնաւորի ուղղագրութիւնը	10
Յ եւ Յ բաղաձայների ուղղագրութիւնը.....	12
Վ եւ Լ բաղաձայների ուղղագրութիւնը	14
Ռ եւ Ր բաղաձայների ուղղագրութիւնը	15
Խ եւ Ղ բաղաձայների ուղղագրութիւնը.....	16
ԻԱ, ԵԱ, ԻԼ, ՈՅ երկհնչիւնների ուղղագրութիւնը.....	17
Բարդ եւ ածանցական բառերի ուղղագրութիւնը	18
Օտարլեզու բառերի ուղղագրութիւնը.....	20
Գոյական, թական անունների ուղղագրութիւնը	21
Կը եւ չ մասնիկի ուղղագրութիւնը.....	22
Եւ-ի ուղղագրութիւնը	23
Յօդ.....	24
Կետադրութիւն.....	25
Առոգանութեան նշանները	26
Բացայայտութեան նշանները.....	27

Նախաբան

Բառն կազմված է Յնչիւններից, ամեն մի հնչիւն ունի իր առանձին նշանը, որին ասում ենք Տառ կամ՝ Գիր: Յնչիւններն արտասանւում են, իսկ տառերը՝ գրւում, տպւում, կարդացւում:

Ձայնաւոր են կոչւում այն հնչիւնները, որոնք կարող են մենակ վանկ կազմել և ինչքան էլ երկար արտասանւեն, իրենց ձայնը պահում են: Ձայնաւորները 8 հատ են՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու: Այս ձայնաւոր հնչիւններից ե և ո ձայնաւորները կոչւում են կիսաձայն ձայնաւորներ, քանի որ դրանք իրենց ձայնը փոխում են է և օ-ի:

Իսկ բաղաձայնները մենակ չեն կարող վանկ կազմել և արտասանելիս շատ կարճ են հնչում: Բաղաձայնները 31 հատ են:

Յայոց լեզուն ունի 38 տառ կամ գիր: Իւրաքանչիւր տառ գրւում է երկու ձևով՝ մեծատառ և փոքրատառ:

Տառերի յաջորդական շարքը կոչւում է այբուբեն կամ այբբեն՝ առաջին և երկրորդ գրերի անուններով:

ՅԱՅՈՅ ԳՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Թիւ	Անուն	Արժէք	Մ.	Փ.	Թիւ	Անուն	Արժէք	Մ.	Փ.
1	Այբ	1	Ա	ա	20	Մեն	200	Մ	մ
2	Բեն	2	Բ	բ	21	Յի	300	Յ	յ
3	Գիմ	3	Գ	գ	22	Նու	400	Ն	ն
4	Դա	4	Դ	դ	23	Շա	500	Շ	շ
5	Եչ	5	Ե	ե	24	Ո	600	Ո	ո
6	Չա	6	Չ	չ	25	Չա	700	Չ	չ
7	Է	7	Է	է	26	Պէ	800	Պ	պ
8	Ըթ	8	Ը	ը	27	Ջէ	900	Ջ	ջ
9	Թօ	9	Թ	թ	28	Ռա	1000	Ռ	ռ
10	Ժէ	10	Ժ	ժ	29	Սէ	2000	Ս	ս
11	Ինի	20	Ի	ի	30	Վել	3000	Վ	վ
12	Լիւն	30	Լ	լ	31	Տիւն	4000	Տ	տ
13	Խէ	40	Խ	խ	32	Րէ	5000	Ր	ր
14	Ծա	50	Ծ	ծ	33	Յօ	6000	Յ	ց
15	Կեն	60	Կ	կ	34	Վիւն	7000	Ի	լ
16	Հօ	70	Հ	հ	35	Փիւր	8000	Փ	փ
17	Ձա	80	Ձ	ձ	36	Քէ	9000	Ք	ք
18	Ղատ	90	Ղ	ղ	37	Օ	10000	Օ	օ
19	Ճէ	100	Ճ	ճ	38	Ֆէ	Բիւր	Ֆ	ֆ

Այբ, բեն - գլխիտ դմփեմ.
 գիմ, դա - փէտը պատռաստ ա.
 Եչ, զա - լաց ու հազա՛.
 Է, եթ - խաղս մնաց ետ.
 թօ, ժէ - մէկ բան էլ չարժէ.
 ինի, լիւն - իծնաս եկան տուն.

իւէ, ծա - կարդացողը էծ ա.

կեն, ho - գերի չեմ ho.

ծա, դատ - մտնի աչքտ մէկ մախատ.

ճէ, մեն - ամէն, կուրանայ՝ ով ձեռք չի վերցնիլ մեզմէն.

յի, նու, շա, ո, չա, պէ, ջէ, ռա - սոված մեռայ.

սէ, վէ, տիւն, ըէ - սովորիլը ծանր է.

go, վիւն, փիւր, քէ - իշի քուրք է.

o, ֆէ - օվէ՛հ, գլուխս տրաքեց՝ Էնքան ասել եմ, Էս ... Էս կորած մոլորած անունները, որ ատամներս թուլացել են, գլխումս էլ ուղեղ չի մնացել:

Մեծատառով սկսում են՝

- Առաջին բառը ամէն մի գրածքի:
- Վերջակէտից յետոյ եկող առաջին բառը:
- Յատուկ անունները և նրանցից անբաժան բառերը. ՕՐԻՆԱԿ՝ Տիգրան Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Աշոտ Ողորմած:
- Աշխարհագրական անունները:
- Վերնագրերը:
- Պարբերութիւնները:
- Ոտանաւորների իւրաքանչիւր տողի առաջին բառը:
- Չակերտների մէջ առնուող ուրիշի խօսքերից առաջին բառը:
- Բոլոր գրածքների անունները. ՕՐԻՆԱԿ՝ «Վերք Հայաստանի»:
- Զաղաքավարական գրութիւնների մէջ գործածուող դերանունը. ՕՐԻՆԱԿ՝ Դուք, Ձեր:

Բառերն ըստ իմաստի լինում են՝

- Նոյնանիշ
Կոչւում են այն բառերը, որոնք գրածքով և արտասանութեամբ տարբեր են, իսկ իմաստով նոյնն են. ՕՐԻՆԱԿ՝ այտ և թուշ, սպիտակ և ճերմակ:
- Համանիշ
Կոչւում են այն բառերը, որոնք գրածքով և արտասանութեամբ տարբեր են, իսկ իմաստով իրար շատ մօտիկ են. ՕՐԻՆԱԿ՝ մութ և խաւար, բարկութիւն և զայրոյթ:
- Համանուն
Կոչւում են այն բառերը, որոնք գրածքով և արտասանութեամբ նոյնն են, իսկ իմաստով տարբեր. ՕՐԻՆԱԿ՝ այր նշանակում է թէ քարայր և թէ տղամարդ:
- Հականիշ
Կոչւում են այն բառերը, որոնք թէ գրածքով և թէ արտասանութեամբ տարբեր են, իսկ իմաստով էլ իրար հակառակ են. ՕՐԻՆԱԿ՝ սպիտակ և սեւ, լոյս և խաւար, վեր և վայր, սիրել և ատել:
- Նոյնհնչիւն
Կոչւում են այն բառերը, որոնք ունեն նոյն հնչիւնը, իսկ իմաստով և գրութեամբ տարբեր են. ՕՐԻՆԱԿ՝ սեր (կաթի սեր) և սեր (սիրել), հոտ (ծաղիկի հոտ) և հոտ (ոչխարի խումբ):

Վանկ եւ տողադարձ

Վանկ է կոչուում այն հնչիւնը կամ մի քանի հնչիւնների միացութիւն, որ արտասանւում է օդի մէկ մղումով, մէկ արտաբերումով: ՕՐԻՆԱԿ՝ պատ, սեղան, ա-շա-կերտ: Մի ձայնաւոր առանձին կարող է մի վանկ կազմել, իսկ առանց ձայնաւորի վանկ չի կազմւի:

Բառերը լինում են միավանկ և բազմավանկ: Ձայնաւորով վերջացող վանկը կոչուում է բաց վանկ (կա-տու), իսկ բաղաձայնով վերջացող վանկը՝ փակ վանկ ՕՐԻՆԱԿ՝ տետ-րակ:

Վանկերը բաժանելիս երկու բաղաձայնի միջև լսող ը ձայնաւորը գրուում է ՕՐԻՆԱԿ՝ բըռ-նել, մըկ-րատ, և այլն: Այսպիսի վանկերը կոչուում են ծածուկ վանկ. ծածուկ վանկի ձայնաւորը ը-ն է:

- Տողադարձի ժամանակ պիտի նկատի ունենալ, որ՝
- բառասկզբում և բառամիջում լսող ը հնչիւնը գրուում է ՕՐԻՆԱԿ՝ ըս-պա-սել, ըս-կը-սել:
 - Բառամիջի և-ը բաժանւում է ե-ի և լ-ի. ՕՐԻՆԱԿ՝ ե-րե-ւալ:
 - Յ ձայնակապը յաջորդ ձայնաւորից անբաժան է մնում. ՕՐԻՆԱԿ՝ նա-յել, ե-րե-կո-յեան:

Ը ձայնաւորի ուղղագրութիւնը

Բառասկզբում և բառավերջում ը ձայնաւորը գրւում է, երբ արտասանւում է. ՕՐԻՆԱԿ՝ Ընկեր, Ընտանիք, Ընծայ եւ այլն:

Բառասկզբում սկ, սպ, ստ, սթ, սք, սփ, գբ, գգ, գմ, շպ, շտ, շկ կապակցութիւններից առաջ թէև արտասանւում է մի թոյլ ը, բայց չի գրւում. ՕՐԻՆԱԿ՝ սկսել, սպասել, ստանալ, սթափել, սքանչելի, սփոփել, գբաղմունք, գգաստ, գմայլել, շպարել, շտապել, շկոլա

Ըստ նախագիրը կազմում է բացառութիւն:

Բառավերջի ը ձայնաւորը (որոշիչ յօդ) փոխւում է ն բաղաձայնի, երբ բառը վերջանում է ձայնաւորով. ՕՐԻՆԱԿ՝ սեղան, Արան, իսկ երբ վերջանում է բաղաձայնով ընդունում է ը յօդը. ՕՐԻՆԱԿ՝ սեղանը, գիրքը: Իսկ երբ բառը վերջանում է բաղաձայնով և յաջորդ բառն սկսւում է ձայնաւորով և կամ վերոյիշեալ 12 կապակցութիւններից որևէ մէկով, յաճախ ընդունում է ն յօդը. ՕՐԻՆԱԿ՝ Աշակերտը կարդում է, Աշակերտն ասում է, բանւորը գործում է:

Բառամիջում սովորաբար ը ձայնաւորը թէև լսւում է, բայց չի գրւում. ՕՐԻՆԱԿ՝ Մկրտում, պրպտում, գլուխ:

Վանկերը բաժանելիս երկու բաղաձայնի միջև լսող ը ձայնաւորը գրւում է. ՕՐԻՆԱԿ՝ բըռ-նել, մըկ-րատ, և այլն:

Ոտանաւորի մէջ բառամիջում լսող ը ձայնաւորը յաճախ գրւում է, չափը պահելու համար:

Նախածանցաւոր և բարդ բառերի մէջ ը ձայնաւորը գրւում է, եթէ ածանցող բառը և կամ բարդ բառի երկրորդ բաղադրիչ մասը սկսւում է ը ձայնաւորով, ՕՐԻՆԱԿ՝ նախընթաց, անընդունելի, դասընկեր, հատընտիր, անընդունակ:

Ե ԵՆ Ե ձայնաւորի ուղղագրութիւնը

Բառի սկզբում երբ լսուում Ե ե այդպէս էլ գրուում Ե. ՕՐԻՆԱԿ՝ երկու, երեխայ:

Բառի սկզբում երբ լսուում Ե Ե այդպէս էլ գրուում Ե. ՕՐԻՆԱԿ՝ Էմիլ, Էգուց, Էլի:

Բառի վերջում երբեք Ե չի գրուում, այլ միշտ Ե: ՕՐԻՆԱԿ՝ բազէ, թոպէ, փայտէ:

Բառամիջում երբ լսուում ենք Ե, մեծ մասով գրուում ենք Ե. ՕՐԻՆԱԿ՝ մեծ, սեղան: Կան մի շարք բառեր, որոնց մէջ երբ լսուում ենք Ե այդպէս էլ գրուում ենք. ՕՐԻՆԱԿ՝ պարտեզ, գմբէթ:

Բառամիջում ձայնաւորից առաջ միշտ գրուում ենք Ե, ՕՐԻՆԱԿ՝ թոպեական, հոգեորդի, գործունէութիւն:

Երբ բառամիջի Ե տառը շեշտը կորցնելով դառնում Ե ի.ՕՐԻՆԱԿ՝ սեր-սիրել, տեր-տիրել, կէս-կիսել:

Ե-ով և Է-ով սկսող բառերը աճեցման և ածանցման ժամանակ պահում են իրենց ուղղագրութիւնը: ՕՐԻՆԱԿ՝ երես - լուսերես, Էջ - վայրէջք, Էր - չէր:

Երբ այ-ը փոխուում Ե Է-ի. ՕՐԻՆԱԿ՝ հայր-հեր, ծայր-ծեր:

Յ տառից առաջ գրուում Ե Ե. ՕՐԻՆԱԿ՝ Չէյթուն, թէյ. սակայն բառի աճեցման (ի եւ ա օրէնքի) ժամանակ գրուում Ե Ե. ՕՐԻՆԱԿ՝ հաշւեյարդար:

Այն բառերը, որ վերջանում են աւետ, եղէն, օրէն, Էն, Էք, երէն ածանցներով, գրուում են Է-ով. ՕՐԻՆԱԿ՝ ծաղկաւետ, ոսկեղէն, քնքշօրէն, արդէն, ջրօրհնէք, հայերէն, Արմէն (բայց Արմենուհի): Բացառութիւն են կազմում երեք, ամենուրեք, երկուստեք, ցորեն, ատեն:

Ամէն բառն աւելի հին ժամանակաշրջանում գրուում էր երկու տեսակ՝ եթէ այդ բառի իմաստն ամբողջութիւն էր նշանակում, այդ գրում էր Ե-ով՝ ամէն, իսկ եթէ այդ աղօթքի վերջում արտասանւած բառն էր, գրուում էր Է-ով՝ ամէն: Սակայն այժմն գրում Ե միայն մէկ տեսակ՝ ամէն, ամէնք, իսկ աճեցման կամ հոլովելու ժամանակ գրուում Ե Ե-ով. ՕՐԻՆԱԿ՝ ամենամեծ, ամենայն:

Բայերի անցեալ ժամանակի վերջաւորութիւնը գրուում Ե Է-ով. ՕՐԻՆԱԿ՝ ասէի, ասէիր, ասեր, ասէինք, ասէիք, ասէին:

Յատուկ անունները, որոնք վերջանում են նես, կես, Էն, Էլ, Էփ մասնիկներով՝ գրուում են Է-ով. Օրինակ՝ Յովհաննես, Արիստակէս, Սուրէն, Միքայէլ, Յովսէփ:

Անցեալ անկատարի եզակի երրորդ դեմքի վերջաւորութիւնն Ե աջ կամ եջ. ՕՐԻՆԱԿ՝ ասաց, ասեց, գրեց, խմեց:

Անցեալ և անկատար ժամանակի բոլոր դէմքերը գրուում են Է-ով. ՕՐԻՆԱԿ՝ գրուում էի, էիր, էր, էինք, էիք, էին, գրէի, գրէիր, գրէր, գրէինք, գրէիք, գրէին:

Անցեալ դերբայի ել վերջաւորութիւնը գրուում է Է-ով. ՕՐԻՆԱԿ՝ գրել, նկարել, տանել, իսկ ել վերջաւորութիւնը կարող է գրուել եր վերջաւորութեամբ. ՕՐԻՆԱԿ՝ գրեր եր:

Էական կամ Օժանդակ եմ բայի ներկայի ձևերն սկսում են Է-ով, բացի եզակի երրորդ և յոգևակի երկրորդ դէմքերից, որ գրուում է Է-ով: Եմ, ես, է, ենք, էք, են :

Կան հասարակ անունների հոլովման հետեւեալ ձևը, որոնք բացառական հոլովում ից հոլովիչի փոխարէն ընդունում են Է հոլովիչ. ՕՐԻՆԱԿ՝ դռնէ դուռ, սարէ սար, ծայրէ ծայր: Յիշեալ ձևը վերցւել է արևմտահայ աշխարհաբարից:

Բառամիջում հ բաղաձայնից առաջ է չի գրուում. ՕՐԻՆԱԿ՝ Չարեհ, պատեհ:

Թ-ից եւ շ-ից առաջ յաճախ գրուում է Է. ՕՐԻՆԱԿ՝ գէթ, գէշ:

Յետևեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրուում են Է-ով՝

- ագաթէս, ադէմ, ազազայել, ազազել, ալելուիա, ակլեզ, աղբեր, ախպեր, աղէկ, աղէտ, աղւես, ապաքէս, առէչ, առէջ, ասէկոս, ասպարեզ, աստէն, այրրէն, անդրէն, անէծք, աստէք, արդէն, արժէք, արժէգին, աւետ, աշխէտ, առնէտ
- բադէն, բազէ, բադէզ, բզէզ, բէզ, բէկ, բէժ, բէլ, բէհ, բէճ, բէշ, բէտ, բոււճ, բրէզաճ, բրէսէտ, բրէտ,բիւ(դ)ջէտ
- գաւէճ, գէզ, գէթ, գէժ, գէմ, գէճ, գէն, գէշ, գէչ, գէս, գէօլոզ, գոմէշ, Գեորզ, գեր, գէլ, Գնէլ
- դէզ, դէս, դէզ, դէլ, դէհ, դէմք, դէն, դէյօր, դէպք, դէտ, դղէզ, դուբէթ
- ելնէշ, եղէզ, եղէն, եղէճ, եղէզ, երաշխէալ, երէց, երէ
- գէն, գէրօ
- ըկէց
- թաւազէս, թէզ, թէժ, թէկուզ, թէպէտ, թէյ, թէօրիա, Թեոդոս, թէ, թէն, թէշիկ
- ժէտ
- լէզ, լէլ, լէշ, լէն, լէգէոն, լիդէր
- խաչմէրուկ, խէթ, խէժ, խէն, խէչ, խէր, խլէզ, խզէմ
- ծէզ, ծովահէն, ծւէնք
- կայէն, կէզ, կէն, կէս, կէտ-կէտ, կոնկրէտ, կոռէճ, կրկէս, կոճղէզ, կոպէկ
- հէզ, հրէայ-հրէայ, հրէշ, հրշէշ
- ձէթ, ձէն
- մէզ, մէզ, մէկ, մէն-մէնակ, մէշ, մէչք, մէշտեղ
- յատկապէս, յարաբերել, յարադիր, յարալէզ, յաւերժ, յաւետ, Յովհաննէս, Յովսէփ
- շէկ, շէր, շէք, շէֆ, շէջ, շէն, Շւէդ (Շւէդ), Շւէտ (Շւէտ), Շւէյցարիա, շրէշ
- Չերքէզ, չորէչոք
- պատնէշ, պատճէն, պատշէկ, պարէն, պարէտ, պարտէզ, պէտք, պէս, պօտէ-պօտէմ
- ջահէլ
- ռէալ, ռէօստոզէն

- սեգ, սեգոն, սեր-սեր
- վատշւեր, վեգ, վեգիր, վեժ, վեճ, վեմ, վես (ահեղ), վեպ, վերք, վետ-վետ, վե(ե)ստ (հշխան), վրեժ, վրեպ
- տեգ, տեր, տարեցտարի, տարեց (տարեց)
- փեշ, փետ, փերի
- քարտեգ, քեֆ, քեշ, քելք (քայքայլած), քերքեշ, քէս

Չետևեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրուում են, թէ Է-ով և թէ Ե-ով և նախընտրելի են Ե-ով գրութիւնները՝

- ընկեց, ընկեց
- խայտաբղետ, խայտաբղետ
- դեգ, դեգ
- հենց, հենց
- գմբեթ, գմբեթ
- ուղեղ, ուղեղ
- երբեք, երբեք
- տարեց, տարեց
- չեզոք, չեզոք
- երեկ, երեկ
- պարսետ, պարսետ
- վեստ- վեստ

Չետևեալ բառերը (սոյնհնչիւն), (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրուում են թէ Է-ով և թէ Ե-ով, այս պարագայում բառի միտքն է որ որոշում է Ե և Է-ով գրւելու ձեւն՝

- գեր(չափով) - գեր(տերութիւն)
- գետ(գիտութիւն) - գետ(ջրային գետ)
- սեր(Սիրել) - սեր(ուտելու սեր)
- թէկն() - թէկն(թէկնածու)
- վեր (վայր) - վեր (նորից, ՕՐԻՆԱԿ՝ վերարտադրել)

Ո ԵՆ Օ ձայնաւորի ուղղագրութիւնը

Ո տառն երկու հնչիւն ունի, բառի սկզբում հնչւում է որպէս վօ, իսկ բառի միջում և վերջում որպէս օ:

Բառի սկզբում երբ լսում ենք ո (վօ), այդպէս էլ գրում ենք. ՕՐԻՆԱԿ՝ որդի, ուկի, որս: Բացառութիւն են կառնում վոհմակ և վոթել բառերը: Այդպէս են գրում և օտարլեզեան այն յատուկ անունները, որոնց սկզբում լսում ենք վօ. ՕՐԻՆԱԿ՝ Վոլգա, Վոլտեր, Վովա:

Բառի սկզբում երբ լսում ենք օ, այդպէս էլ գրում ենք. ՕՐԻՆԱԿ՝ օր, օձ, օղակ: Բացառութիւն են կազմում ով, ովկիանոս, Ովսաննա(յ), ովագիս բառերը:

Բառի միջում երբ լսում ենք օ, մեծ մասով գրում ենք ո. ՕՐԻՆԱԿ՝ մում, գործ, մոլորել, բոլորովին:

Յօ, տօ, ծօ և նման բառերի վերջում միշտ գրում ենք օ:

Օ տառը բառամիջում քիչ է գործածւում. կան մի շարք բառեր, որոնց մէջ գրում է օ, և որոշ օրէնքի չեն ենթարկւում. ՕՐԻՆԱԿ՝ կարօտ, մօտ, պաշտօն:

Բառի վերջում երբ լսում ենք օ, մեծ մասով գրում ենք ոյ, ՕՐԻՆԱԿ՝ երեկոյ, յետոյ: Բացառութիւն են կազմում այո և քո բառերը:

Այն մարդկանց անունները, որոնց վերջում լսում ենք օ հնչիւնը, գրում ենք թէ օ-ով և թէ ո-ով. ՕՐԻՆԱԿ՝ Մարօ-Մարոյ, Կարօ-Կարոյ, Սարօ-Սարոյ: նման անունները օ-ով գրելիս նկատի պիտի ունենալ, որ հոլովւելիս օ-ն փոխւում է ոյ-ի. ինչպէս՝ Մարօ-Մարոյի: Սակայն գրում է և օ-ով առանց յ-ի. ՕՐԻՆԱԿ՝ Մարօ-Մարօի:

Օրէն ածանցը գրում է օ-ով. ՕՐԻՆԱԿ՝ քնքշօրէն, դառնօրէն:

Այն գոյականները, որոնք ազգակցութիւն են ցոյց տալիս, հոլովւում են օր-ոջ սեռական տրականով, իսկ մի մասն էլ ց սեռական տրականով. ՕՐԻՆԱԿ՝ քրոջ, մօր:

Բառավերջի օք բառն ընդհանրապէս գրում է օք-ով. ՕՐԻՆԱԿ՝ իրօք, արդէօք, բացառութիւն է կազմում չէզոք բառը:

Յետևեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրում են օ-ով՝

- ակռօշ, ակօս, աղօշ, աղօտ, աղօթք, աղօրի, ամօթ, անօթի, աչօն, ապառօշ, ապելիօտ, ապօտիքս, ապօրին, առաջնօր, առաչօք, առաւօտ, առմօռ, առօք, ասէկօս, առօրեայ, ասպաղօլ, աստանօր, այդանօր, անդանօր, արդէօք, արհօրք, արկօղ, արտօն, արտօսք, արտորնօք, արտօտ, արտօրայք, արտօնութիւն, արտօսք, արօս, արօտ, արօր, աւօտ-Չաւօտ
- բազմօտ, բաղօղ, բանպօտ, բօնբօն, բօնպօտ, բարկօղի, բարօր, բացօղեայ, բացօթեայ, բիօլոգ, բլօշ, բրդօնք, բրդօշ, բրօշ, բօթ, բօլ, բօխօլ, բօշ,բօյ
- գարօղի, գաւէճ, գեօղ, գեօռ, գեօրծին, գիշերօթիկ, գզօն, գեօլոգ, գողօնք, գործօն, գօս, գօտի, գօշ

- դգօտ, դէյօր, դնդօշ, դրօշ, դօդ, դօդօշ, դօլ, դօլմա, դօշակ, դօշ, դօրմէլ, դօրիքս
- երակօթ, եփօն, եօթ, եօթն, եօլայ, եօրդան
- գբօսանք, գարթօնք, գգօն, գէրօ, գօդ, գօլ, գօշ, գօռ, գօր-գոր, գօծ
- թաց ու թօն, թաւայօն, թափօն, թափօր, թէօրիա, թերթօն, թնդանօթ, թօթափէլ, թօթով, թօշնէլ
- իրօք
- լօզունք, լօշ, լօշտակ, լօտօ, լօշի
- խելօք, խզօն, խճօն, խմբլօշ, խոյօշ, խօսք, խօթ, խօշիւն, խօլ, խօ (խոմ)
- ծանօթ, ծերօն, ծղօն, ծղօտ, ծրօն
- կարօտ, կարծեօք, կարճառօտ, կտրօն, կոծօնք, կրօն, կօշ, կօշիկ, կոչօնք
- համառօտ, հետագօտէլ, հզօր, հօրոտ-մօրոտ, հօքիր
- ձօն
- դօղանչ
- ճօճ, ճօչ
- մօտ, մօրուք
- յօնք, յօդ, յօդաճ, յօժար, յօնեղ, յօշոտէլ, յօրանջէլ, յօրինէլ
- նարօտ, նախօրօք, նօսր, նօտար, նօտր, նօթի (անօթի), նօթ - նոտա
- շօղ, շօշափէլ
- պաշտօն, պռօշ, պրօն - պարոն, պօետ-պօեմ, Պօղոս
- ջահէլ, ջէք, ջէրան
- ռադիօ, ռեալ, ռէօնտգէն
- սօլօ, Սօսուն, սօս, Սօսի
- վառօդ, վէտօ
- Տարօն, տօթ, տօն, տօսախ
- ցաւօք, ցօղ
- փառօք
- քօլոս, քօղ, քօշ (այծ), քէօսայ, քէօշկ, քէօխւայ
- օրօր, օթօման
- ֆօն

Չետնեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրուում են թէ օ-ով և թէ ո-ով և նախընտրելի են ո-ով գրութիւնները՝

- պօետ-պօեմ - պոետ-պոեմ

Չետնեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրուում են թէ օ-ով և թէ ո-ով, այս պարագայում բառի միտքն է որ որոշում է օ և ո-ով գրւելու ձեւն՝

- հոտ (բուրմունք) - հօտ (անասունների խումբ)

Յ ԵՆ Յ բաղաձայների ուղղագրությունը

Բառի սկզբում յ տառը Յ-ի նման հնչիւն ունի. ՕՐԻՆԱԿ՝ յաճախ, յիմար, յանկարծ:

Բառասկզբում յ-ով գրելու համար յատուկ օրէնք չկայ:

Յ-ով են սկսւում այն բառերը, որոնց յ հնչիւնը կարող է դէն գցւել. ՕՐԻՆԱԿ՝ յաջող-աջող, յառաջ-առաջ, Յակոբ-Ակոբ:

Երբ հ հնչիւնից յետոյ գալիս է մի ուրիշ բաղաձայն, գրւում է հ-ով. ՕՐԻՆԱԿ՝ հրապարակ, հպարտ, անհնար: Բացառութիւն են կազմում յղել, յղկել, յղանալ, յղի, յտակ, յղփանալ բառերը:

Բառամիջում և վերջում երբ լսում ենք հ հնչիւնը, գրւում ենք հ. ՕՐԻՆԱԿ՝ Վահան, ահագին, գահ, ճանապարհ:

Բառամիջում երբ երկու ձայնաւորներ իրար մօտ են գալիս եւ դրանցից առաջինը ա կամ ո է լինում, դրանց միջև ընկնում է յ բաղաձայնը եւ կոչւում է ձայնակապ, քանի որ դա յիշեալ երկու ձայնաւորների հնչումը միացնում է իրար. ՕՐԻՆԱԿ՝ տղայ-տղայական-տղայութիւն:

Այն բազմավանկ բառերը, որոնք վերջանում են ա կամ օ հնչիւնով, գրւում են այ և ոյ, որոնց վերջին յ-ն անձայն է մնում. ՕՐԻՆԱԿ՝ տղայ, երեխայ, երեկոյ, յետոյ:

Երբ Գոյականի վերջում անձայն յ կայ, որոշիչ յօդ ընդունելու ժամանակ այդ յ հնչիւնը սղւում է. ՕՐԻՆԱԿ՝ քահանայ-քահանան, տղայ-տղան, երեկոյ-երեկոն:

Բառավերջում ա-ից յետոյ անձայն յ-ն չի գրւում հետևեալ դեպքում:

- Յատուկ անունների վերջում. ՕՐԻՆԱԿ՝ Արա, Սեդա, Ասիա:
- Բայերի հրամայական եղանակի եզակի վերջաւորութիւնում. ՕՐԻՆԱԿ՝ ասա՛, կարդա՛, գնա՛, խաղա՛:
- Դերանունների վերջում. ՕՐԻՆԱԿ՝ սա, դա, նա, սոքա, դոքա, նոքա, սրա, դրա, նրա, քո:
- Մի քանի միավանկ և երկվանկ բառերի վերջում. ՕՐԻՆԱԿ՝ ապա, հապա, ահա, հիմա, այո:
- Օտարազգի բառերի վերջում. ՕՐԻՆԱԿ՝ Ֆիզիկա, քիմիա, սոդա, մոլլա, մոդա:

Յայերէն աշխարհաբար լեզւի մէջ կան նաև այնպիսի գոյականներ, որոնք պահպանել են գրաբար հոլովման ձևը և իրենց հոլովիչներով տարբերւում են մեր աշխարհաբարի հոլովածեւերից (Չարտուղի հոլովումներ). այս ձևով ընդհանրապէս հոլովւում են յատուկ անունները. ՕՐԻՆԱԿ՝ Սևան-Սևանայ, Վան-Վանայ, Գեղամ-Գեղամայ:

Մի՛ արգելականի վրայ միշտ շե՛տ է դրւում և բայը վերջում ստանում է անձայն յ տառը. ՕՐԻՆԱԿ՝ մի՛ գնայ, մի՛ կարդայ:

Յետևեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դեպքում) գրւում են յ-ով՝

- յաբեթ, յագենալ, յագուրդ, յագել, յախճապակի, յախնթոր, յախունն, յածել, յականէ, յակինթ, յանւանէ, յանկարծ, Յակէն, Յակո(վ)բ, յակրի, յաղագս, յաղթել, յաճախ, յաճախորդ, յաճախել, յամառ, յամերամ, յամել, յամոյր, յամով, յամր (ծանր), յայսմաւուրք, յայտ, յանգ, յանդուզն, յանդգնել, յանդիման, յանձն, յանցանք, յապա, յապաղել, յաջող, յաջորդ, յառաջ, յառել, յառնել, Յասմիկ, յատել, յատուկ, յատկապէս, յարաբերել, յարադիր, յարալէզ, յարագօդ, յարաժամ, յարակից, յարածիգ, յարատել, յարած, յարալէզ, Յարուֆին, Յարութ, յարգել, յարգոյ, յարդ, յարդար, յարեաւ, յարել, յարիր, յարձակել, յարմար, յարքունուստ, յարկ (տան յարկ), յաւետ, յաւակներ, յաւելեալ, յաւելել, յաւերժ, յաւետ, յաւիտեան, յափշտակել, յերկիր, յեղամիտ, յեղափոխական, յեղաշրջել, յեղել, յեղյեղել, յենակետ, յենարան, յենել, յետ, յետաձգել, յետադարձ, յետամնաց, յետամուտ, յիմար, յիսուն, յիշել, յիշատակ, Յիսուս, յիրաւի, յղանալ, յղել, յղկել, յղի, յղփանալ, յրբելեան, յոգնել, յոգնակի, յոգոց, յոխորտալ, յոխորոտ, յողդողդ, յոյն, յոյլ (ծոյլ), յոյր, Յունաստան, յուրան, յոյժ, յոյգ, յոյս, յոպոպ, յոռի, յոռետես, Յովհաննէս, Յովնան, Յովսէփ, յովտ, յովագ, յորդ (առատ), յորդորել, յոտնկայս, յովտակ, յորդ, յորդոր, յորժամ, յորջորջել (անւանել), յորձանք, յուզել, Յուդա, Յուլեան, Յուլիս, Յունիս, Յունւար, Յունիկ, յուզակ, յուզել, յուշ, յուռութ, յուլ, յուլանալ, յուլեան, Յուդարկաւոր, յօնք, յուն, յստակ, յօդ, յօժար, յօնեղ, յօշոտել, յօտ, յօսել, յօրանջել, յօրինել

Չետնեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրում են թէ յ-ով և թէ հ-ով, այս պարագայում բառի միտքն է որ որոշում է յ և հ-ով գրւելու ձեւն`

- յետ (յետոյ) - հետ (միասին)
- յետագայ (յետագայ սերունդները) - հետագայ (հետեւեալ, հետագայ պայման)
- յարկ (տան) - հարկ (տուրք)
- յամր (ծանր-դանդաղ) - համր (չլսող)
- յանգ - հանգ
- յոլով (շատ) - հոլով

Վ ԵՆ Լ Բաղաձայների ուղղագրությունը

Վ հնչիլնի համար Յայերենում ունենք երկու տառ՝ վ և ւ:

Բառասկզբում միշտ գրվում է վ. ՕՐԻՆԱԿ՝ վարդ, վատ, Վարդան:

Ո և ու ձայնաւորներից յետոյ միշտ գրվում է վ. ՕՐԻՆԱԿ՝ ծով, սով, Լուվր:

Բարդ բառի մէջ երկրորդ բաղադրիչի բառասկզբի վ-ն մտնում է. ՕՐԻՆԱԿ՝ գրավաճառ, մսավաճառ, թովոճալ, ինչպէս և վ-ով սկսուող ածանցւած բառերում. ՕՐԻՆԱԿ՝ անվախ, անվնաս, անվերջ:

Բառամիջում (պարզ բառերի) միշտ գրվում է ւ. ՕՐԻՆԱԿ՝ աւար, տերեւ, ծածուկ, անիւ:

Ուշադրութիւն պէտք է դարձնել բարձրաւանդակ բառին, որը կազմւում է բարձր եւ աւանդակ բառերից:

Բաղաձայնից յետոյ և ձայնաւորից առաջ գրվում է ւ եւ ընդունւած է գրել նաև ու-ով. ՕՐԻՆԱԿ՝ թւալ, նւիրական, թուալ, լսուել, նւիրական:

Ռ ԵՆ Ր Բաղաձայների ուղղագրությունը

Ռ հնչիւնը կոչու է, իսկ ր-ն փափուկ. ՕՐԻՆԱԿ՝ դուռ, տուր:

Ն բաղաձայնից առաջ գրուում է ո (եթէ նրանց միջից ձայնաւոր դուրս չի ընկած). ՕՐԻՆԱԿ՝ դառնութիւն, բռնել, գառնուկ, առնետ:

Մնացած բաղաձայներից առաջ գրուում է ր. ՕՐԻՆԱԿ՝ արծաթ, կարկուտ, կարդալ: Բացառութիւն են կազմում՝ ուռկան, խռպոտ, ուռճանալ, յուռթի, կառք, փառք:

Ն-ից առաջ ր կարող է գրւել միայն այն դէպքում, երբ բառարմատի հնչիւնափոխութեան հետևանքով ն-ի և ր-ի միջի ձայնաւորը դուրս է ընկնում. ՕՐԻՆԱԿ՝ գարուն-գարնանային, արիւն-արնաշաղախ, վերին-վերնատուն:

Կրկնութեամբ կազմւած բառերի մէջ առաջին ո-ն բաղաձայնից առաջ ընկնելով՝ ր-ի է փոխւում. ՕՐԻՆԱԿ՝ բարբառ, մրմուռ,գրգիռ, այս տեսակի բառերը եթէ նմանաձայնութիւն և ձայնի սաստկութիւն են ցոյց տալիս կարելի է ո-ով էլ գրել. ՕՐԻՆԱԿ՝ ճռճռալ, մռմռալ, թռթռալ:

Խ ԵՆ Ղ Բաղաձայների ուղղագրությունը

Խ տառը բառասկզբում և բառավերջում, երբ արտասանւում է, այդպէս էլ գրւում է. ՕՐԻՆԱԿ՝ խօսք, խնամք, վախ, ծուխ:

Պարզ բառերի մէջ, բաղաձայնից առաջ (բացառութեամբ տ Բաղաձայնի), երբ լսում ենք խ մեծ մասամբ գրւում ենք ղ, իսկ արտասանւում խ. ՕՐԻՆԱԿ՝ աղջիկ, եղբայր, կեղտ, թուղթ: Բացառութիւն են Կազմում՝ վախճան, դժոխք, թխկի, նախշուն, թուխս, թուխպ, նախճիր

Տ Բաղաձայններից առաջ մեծ մասամբ գրւում է խ. ՕՐԻՆԱԿ՝ ախտ, բախտ, ապուխտ, պանդուխտ, զմրուխտ, երախտիք, ժխտել, դուխտ, տախտակ, թախտ, սխտոր, դրախտ, լախտ, խրոխտ, խախտել: Բացառութիւն է կազմում՝ կեղտ բառը:

Չետևեալ բառերը (պարզ, աճեցման, ածանցաւորման կամ հոլովւելու դէպքում) գրւում են թէ ղ-ով և թէ խ-ով, այս պարագայում բառի միտքն է որ որոշում է ղ և խ-ով գրւելու ձեւն՝

➤ ուղտ (կենդանի) - ուխտ (խորհուղ, երդում)

Ուշադրութիւն՝

➤ Եթէ բառը նշանակւում է ճանապարհ և ցոյց է տալիս մէկ ուղի, գրւում է մէկ ղ-ով. ՕՐԻՆԱԿ՝ ուղի, ուղեգիծ, ուղեգիր, ուղեգնաց, ուղեղ, ուղեկից, ուղեկցել, ուղետոմս, ուղերձ, ուղեցոյց, ուղեւոր, ուղիղ, ուղարկել, ուղածել

➤ Եթէ այդ բառը նշանակւում է ճիշտ լինել, ճշտել, կանոնին ենթարկւել, գրւում է երկու ղ-ով. ՕՐԻՆԱԿ՝ ուղղագիր, ուղղաբար, ուղղագիծ, ուղղագրութիւն, ուղղագրել, ուղղել, ուղղափառ

ԻԱ, ԵԱ, ԻԼ, ՈՅ երկհնչիլների ուղղագրությունը

Իա երկհնչիլը շփոթւում է եա երկհնչիլի հետ, ուստի պետք է յիշել հետևեալ կանոնները:

Չայերէն կամ հայացւած բառերի արմատների մէջ իա կապակցութիւնը գրւում է հետևեալ բառերում՝

- հեքիաթ, Անանիա, ծիածան, խաւիար, Չաքարիա, դաստիարակ, Եղիազար, Սուքիաս, Ուստիան, Մարիամ, Արփիար

Իա գրւում է ձի, թի, լի, հի, մի, դի բառարմատների և աջի կամ ի վերջաորութիւն ունեցող բառերի բարդութեան և ածանցման ժամանակ. ՕՐԻՆԱԿ՝ ձիաւոր, թիակ, լիառատ, միակ, հիանալ, գիւղացիական, որդիական:

Ուշադրութիւն պետք է դարձնել միմեանց բառին:

Իա գրւում է Եւրոպական լեզուներից փոխ առնւած բառերում, երկրների և աշխարհամասերի անուններում. ՕՐԻՆԱԿ՝ քիմիա, մատերիալ, սոցիալիզմ, Ասիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա:

Մարդկանց յատուկ անունների վերջում լււած եա-ն գրւում է իա. ՕՐԻՆԱԿ՝ Վիկտորիա, Օֆելիա, լուսիա, Ամալիա, Վանիա, Կոստիա:

Այլ դէպքերում Չայերէն բառերի մէջ եա կամ իա լււելիս գրւում է եա. ՕՐԻՆԱԿ՝ սենեակ, մատեան, պաշտօնեայ, ոսկեայ, փայտեայ, Արամեան, Սահակեան, Յրեայ (Յրեա-Յրեայ):

Երբ երկու ձայնաւոր կամ մի ձայնաւոր ու մի բաղաձայն այնպէս են ձուլւում իրար, որ մի նոր հնչիւն են առաջ բերում կոչւում են երկբարբառ կամ երկհնչիւն: Երկբարբառներն են՝ այ, ոյ, ույ, իւ, եա, եօ: (Ույ երկբարբառը երկու արտասանութիւն ունի. այսպէս՝ լոյս, բոյս, յոյս, բառերի մէջ հնչւում է որպէս ույ, իսկ գոյական, նոյ, խոյ բառերի մէջ որպէս օյ):

Եա երկբարբառը աճեցման ժամանակ կորցնում է ա տառը. ՕՐԻՆԱԿ՝ մատեան-մատենադարան, ատեան, ատենապետ:

Իւ-ով վերջացող բառերը աճեցնելու ժամանակ ի ձայնաւորը սղւում է. ՕՐԻՆԱԿ՝ պատիւ-պատւական, հաշիւ-հաշւապահ:

Ոյ երկհնչիւնը բառարմատների ածանցւելու կամ բարդւելու ժամանակ սովորաբար վերածւում է ու ձայնաւորի. ՕՐԻՆԱԿ՝ ծոյլ-ծուլանալ, թոյլ-թուլանալ, բոյր-բուրաւետ, ստոյգ-ստուգում, լոյս-լուսանալ

Նոյն բառը չի ենթարկւում այս օրէնքին. այսպէս՝ նոյն-նոյնպէս, նոյնութիւն:

Բարդ եւ ածանցական բառերի ուղղագրութիւնը

Բարդ բառերը կազմուում են պարզ բառերից՝ ա յօդակապի օգնութեամբ. երբ բարդ բառի առաջին բաղադրիչը վերջանում է ի-ով, այդ ի և ա (յօդակապ) տառերը իրար մօտ գալով դառնում են ե. ՕՐԻՆԱԿ՝ գինի-ա-վաճառ – Գինեվաճառ, կաշի-ա-գործ – կաշեգործ:

Բարդ և ածանցական բառերի երկրորդ բաղադրիչ մասը պահում է իր ուղղագրութիւնը. ՕՐԻՆԱԿ՝ գրավաճառ, անվախ, սիրայօժար, բարեյոյս:

և կամ ու հնչիւնները յօդակապ չեն, այլ այդ բառերը սկզբում գրւելիս եղել են առանձին առանձին, և հետագային լեզւի դիւրութեան համար միացել և դարձել են մէկ բառ:

Ի եւ ու ձայնաւորներն եթէ բառի վերջին վանկի մէջ են գտնուում, բառը աճեցնելու ժամանակ սղում են. ՕՐԻՆԱԿ՝ հուր-հրեղէն, ճշմարիտ-ճշմարտութիւն:

Բառերը բարդանալիս, եթէ իրենց վերջում ունենում են ք ոչ արմատական հնչիւնը, այդ ք-ն ընկնում է. ՕՐԻՆԱԿ՝ մեղք մեղապարտ, ոտք ոտնաման:

Բառի այն մասը, որն առանձին վերցրած միտք չունի, այսինքն բառ չի՝ կոչւում է ածանց: Ածանցներն երկու տեսակ են, նախածանց, որոնք գալիս են արմատի սկզբից և վերջածանց՝ որոնք գալիս են արմատի վերջից:

Նախածանցներն են՝ ա, ան, ապ, տ, դժ, չ, հակ, որոնք կոչւում են ժխտական, ունենք նաև համ ոչ ժխտական ածանցը:

Վերջածանցները Հայոց լեզւում շատ են, դրանցից են՝ եղէն, երէն, օրէն, աւետ, ւած, պէս, էլ, էն, էս, ութիւն, ոտ, իկ, ոկ, ուկ, եայ, ցնի, ուհի, աւենի, ...

Կան նաև կրկնածանց բառեր, որոնք մէկից աւելի ածանց ունեն. ՕՐԻՆԱԿ՝ անմարդկային, թագաւորական, անկարգութիւն:

Կան նաև բարդ-ածանցական բառեր, որոնք թէ բարդ են և թէ ածանց ունեն. ՕՐԻՆԱԿ՝ հարցաքննութիւն, որը կազմւած է հարց, քննել արմատներից և ութիւն ածանցից. դատաւարութիւն, դատ, վարել արմատներից և ութիւն ածանցից:

Ածական բառերը, ալ վերջածանցով վերածւում են բայի, իսկ ութիւն վերջածանցով վերածւում են գոյականի. ՕՐԻՆԱԿ՝ ծեր - ծերանալ և ծերութիւն, մեծ - մեծանալ և մեծութիւն:

Անիսկական բարդութիւններ կոչւում են այն բարդ բառերը, որոնք շեղւում են բարդ բառերի կազմութեան սովորական ձևերից: Անիսկական բարդութիւնները ա յօդակապ չունեն: Անիսկական բարդ բառերը լինում են երկու սեւակ՝ յարադիրներ և կցական:

➤ Յարադիրներ, որոնք թեպէտ մի բառի նշանակութիւն ունեն, բայց անջատ են գրւում: Յարադիր բարդ բառերը երբեմն միանում են շաղկապով կամ կապով, երբեմն էլ առանց դրանց. այդ դեպքում բաղադրիչ մասերի մէջ

դրում է միութեան գիծ կամ գծիկ (-). ՕՐԻՆԱԿ՝ ջարդ ու փշուր, տուն ու տեղ, ահ ու դող, դէս ու դէն, մի առ մի, բառ առ բառ, գոռում-գոչում, թև-թիկունք, կանաչ-կարմիր:

- Կցական բարդութիւններ, որոնք կազմում են յարադիր բարդութիւններից և միասին են գրում: Այստեղ շէշտն ընկնում է երկրորդ բաղադրիչի վրայ. ՕՐԻՆԱԿ՝ կեսօ՛ր, այսօ՛ր, այսպէ՛ս, կերուխո՛ւմ, դեմառդէ՛մ, տասնմէ՛կ, գոյզգո՛յն:

Օտարլեզւեան բառերի ուղղագրութիւնը

Օտարլեզւեան բառերը մեծ մասամբ գրում են նոյն ուղղագրութեամբ, ինչպէս Հայերէն բառերը:

Բառամիջում երբ լոււմ ենք օ, ոմանք գրում են օ, իսկ շատերն էլ՝ ո, ՕՐԻՆԱԿ՝ Եւրոպա-Եւրօպա, մողա-մօղա: Պէտք է գերադասել ո-ով գրութիւնը, որ Հայերէն բառերի մեծամասնութեանը յատուկ է:

Բառամիջում ե և է տառերով գրութիւնն էլ գործածական է. ՕՐԻՆԱԿ՝ գրում են սիստեմ և թէ սիստեմ, մէթոդ-մեթոդ: Այստեղ էլ պէտք է գերադասել ե-ով գրութիւնը, որը յատուկ է Հայերէնի բառերի մեծամասնութեանը:

Գոյական, թւական անունների ուղղագրութիւնը

Գոյական անունների յոգնակի վերջաւորութեան մէջ լսող է հնչիւնը միշտ գրուում է ե. ՕՐԻՆԱԿ՝ գրքեր, տետրակներ: Երբ բազմական բառը վերջանում է ն-ով, այդ դէպքում յոգնակին ունենում է երկու ն. ՕՐԻՆԱԿ՝ սեղան-սեղաններ:

Միավանկ բառերն որն ունեցել են անցեալում և տառը, յոգնակի դարձնելու կամ աճեցման ժամանակ գրուում է ն տառը. ՕՐԻՆԱԿ՝ մատ-մատներ:

Միավանկ բառերի ու ձայնաւորը, յոգնակի դարձնելու կամ աճեցման ժամանակ սղում է. ՕՐԻՆԱԿ՝ մուկ-մկներ, դուռ-դռներ:

Մարդ, կին բառերի յոգնակին է՝ մարդիկ, կանայք: Կան անուններ, որոնք երբեմն յոգնակիում ստանում են գրաբարի ք վերջաւորութիւնը, ՕՐԻՆԱԿ՝ երեխայք, տանեցիք:

Հայր, մայր, եղբայր բառերի և նրանց բարդութիւնների սեռական հոլովը գրուում է օ-ով. ՕՐԻՆԱԿ՝ հօր, մօր, եղբօր:

Դասական թւականների վերջաւորութիւնն է րորդ . ՕՐԻՆԱԿ՝ երկրորդ, երրորդ:

Գոյական անունները նայելով իրենց Սեռական հոլովի վերջաւորութեան (հոլովիչին), հոլովում են 8 ձև. դրա համար էլ մենք ունենք 8 հոլովիչներ. դրանք են՝ ի, ու, ան, եան, ւայ, օր, ոջ, ց:

Ց-ով են հոլովում այն գոյական անունները, որոնք ազգակցութիւն են ցոյց տալիս և գործ ենք ածում յոգնակի ձևով. ՕՐԻՆԱԿ՝ քեռնք - քեռնց, Վարդանենք - Վարդանենց:

Կը եւ չ մասնիկի ուղղագրութիւնը

Բայերի ենթադրականի կը եղանակիչը գրում է, բայց անջատ, իսկ եթէ բայն սկսում է ձայնաւորով, կը եղանակիչը գրում է միացած՝ առանց ը-ի և կամ ապադարցով (') . ՕՐԻՆԱԿ՝ կը գնամ, կը խօսեմ, կասեմ (կ'ասեմ), կերգեմ (կ'երգեմ):

Չ-ը բացասական մասնիկը գրում է բայի հետ միացած, առանց ը-ի, կան և անջատ գրողներ. ՕՐԻՆԱԿ՝ չխօսեց (չը խօսեց), չտեսաւ (չը տեսաւ):

Եւ-ի ուղղագրութիւնը

Եւ շաղկապը կարող է գրել սեղմած և կերպով, որևէ տարբերութիւն չկայ և և եւ գրելու միջև, միայն թէ տպագիր և Մեծատառ գրելու ժամանակ և այն նախադասութիւնները որը գրուում են խոշոր ձևով մի միտք շեշտով արտայայտելու համար, և-ը գրուում է անպայման իրարից անջատ (եւ):

Յօդ

Այն տառը (հնչիւնը), որ դրւում է գոյական անունների վերջում եւ մասնաւորում է նրանց իմաստը՝ կոչւում է յօդ: Հայոց լեզւում ունենք որոշիչ, դիմորոշ և ստացական յօդեր: Որոշիչ յօդը դրւում է գոյականների վերջում եւ նրանց դարձնում է որոշ, ճանաչւած. ՕՐԻՆԱԿ՝ գիրքը գնեցի (այսպիսով պարզում ենք ո՞ր գիրքը գնեցի):

Բառավերջի ը որոշիչ յօդը փոխւում է ն բաղաձայնի, երբ բառը վերջանում է ձայնաւորով. ՕՐԻՆԱԿ՝ սեղան, Արան, իսկ երբ վերջանում է բաղաձայնով ընդունում է ը յօդը. ՕՐԻՆԱԿ՝ սեղանը, գիրքը: Իսկ երբ բառը վերջանում է բաղաձայնով և յաջորդ բառն սկսւում է ձայնաւորով յաճախ ընդունում է ն յօդը. ՕՐԻՆԱԿ՝ Աշակերտը կարդում է, Աշակերտն ասում է, բանւորը գործում է:

Երբ Գոյականի վերջում անձայն յ կայ, որոշիչ յօդ ընդունելու ժամանակ այդ յ հնչիւնը սղւում է. ՕՐԻՆԱԿ՝ քահանայ-քահանան, տղայ-տղան, երեկոյ-երեկոն:

Ս և Դ յօդերը գալիս են գոյականների վերջում և պատկանելիութիւն կամ դէմք են ցոյց տալիս. ՕՐԻՆԱԿ՝ փոխանակ ասենք իմ գիրքը, ասում ենք գիրքս, իսկ սխալ է ասել ~~իմ գիրքս~~, պէտք է ասել կամ իմ գիրքը կամ էլ գիրքս:

Կետադրութիւն

Գրելիս նախադասութիւններն իրարից զատում ենք կետադրութեամբ, որպէսզի չխառնուեն միմեանց: Այդ նշաններն են՝ Վերջակետ(:) Միջակետ (.) Ստորակետ (,) Բուլթ(^) :

Վերջակետը դրում է երբ խօսքն ամբողջացած ենք համարում. ՕՐԻՆԱԿ՝ Մութ գիշեր էր. ճանապարհս խորդ ու բորդ:

Միջակետը դրում է՝

- Համազօր, մտքերով մօտիկ, բայց բարդ նախադասութիւնների մէջ. ՕՐԻՆԱԿ՝ Օդը ջինջ էր և խաղաղ. արեւն արդէն մայր մտաւ. թռուներն ուրախ շտապում էին իրենց բները.
- Ուրիշի ուղղակի խօսքից առաջ. ՕՐԻՆԱԿ՝ Այսպէս խօսեց յատակից. «Խիզա՛խ, անմի՛տ պատանի»:

Ստորակետը դրում է՝

- Նախադասութեան կրկնուած անդամների մէջ:
- Համազօր և միմեանց կապուած անդամների մէջ:
- Այն նախադասութիւնների մէջ որոնք կապուած են լինում որ, որովհետև, քանի որ, երբ, որպէսզի շաղկապներով (շաղկապից առաջ):
- Համադասական՝ բայց, իսկ, սակայն, այլ, կամ, թէ, գոնէ, գէթ, մանաւանդ, այսինքն, Էլ շաղկապներից առաջ: Կամ շաղկապից առաջ ոչ մի կետ չի դրում, երբ գործ է ածում բացադրական նշանակութեամբ. ՕՐԻՆԱԿ՝ Արաքս կամ Երասխ գետը Հայաստանի մայր գետն է:
- Ստորակետ և գիծ դրում է՝ այս, այդ, այն, այս ամենը, այս ամենը, բոլոր, ահա, ահա այն բաներից առաջ, երբ դրանցով ամփոփում են թուած մտքերը: ՕՐԻՆԱԿ՝ բաների կուտակում, իմաստների յորդութիւն, բացատրութեան խտրութիւն, – ահա այն յատկութիւնները, որ երևում են արաբական շրջանի Հայ մատենագրերի մէջ:
- Կոչական բաներից և ձայնարկութիւններից առաջ և յետոյ:
- Նախադասութիւններն իրար կապող և և ու շաղկապից առաջ երբ ենթականները տարբեր են:

Բուլթը դրում է՝

- Երբ խօսքի մէջ մէկ կամ քանի բառ գեղջւում է. ՕՐԻՆԱԿ՝ երեքն էլ ներս մտան նախ՝ աւագը, ապա՝ միջնակը, վերջը՝ կրտսերը:
- Թւարկութիւն ցոյց տուող բաներից առաջ. ՕՐԻՆԱԿ՝ տանտիկինը գրեց՝ ձու, պանիր, իւղ:
- Բացադրութիւն ցոյց տուող բաներից առաջ. ՕՐԻՆԱԿ՝ Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, յայտնի է վարդագոյն քաղաք անունով:

Առողջանութեան նշանները

Խօսելու, կարդալու, արտասանելու ժամանակ ձայնն ունենում է ելևէջներ, որից լսողը կարողանում է հասկանալ, թե արդեօք հարցնում ենք, հրամայո՞ւմ, թե՞ զարմացած ենք: Ձայնի այդ ելևէջին անւանում ենք առողջանութիւն: Առողջանել նշանակում է արտասանել, ասել:

Առողջանութեան նշաններն են՝ Հարցական (?) Բացագանչական (') և Շեշտ(·):

Հարցական նշանը դրում է հարց արտայայտող բառի այն ձայնաւորի վրայ, որտեղ ձայնը մի փոքր բարձրանում է. ՕՐԻՆԱԿ՝ Ե՞րբ, ո՞րտեղ, ի՞նչ:

Բացագանչական նշանը (երկարացման, զարմանքի) դրում է համապատասխան բառի վերջին ձայնաւորի վրայ. ՕՐԻՆԱԿ՝ Երանի՛, ափսո՛ս, ա՛խ:

Շեշտը դրում է հրամայական կամ պատւեր ցոյց տուող բառի վերջին ձայնաւորի վրայ. ՕՐԻՆԱԿ՝ գնա՛, գրի՛ր, երգէ՛ք:

Հայոց լեզւի մէջ, նախադասութեան դասաւորման ժամանակ բայն ազատ է եւ կարող է դրել նախադասութեան վերջում, միջում կամ սկզբում: Բայ ստորոգեալի տեղափոխութեամբ՝ նախադասութիւնն իր իմաստը չի փոխում, այլ միայն շեշտաւորումն է փոխում, այդ պատճառով էլ մնան նախադասութիւններում գործածւած շեշտը կոչւում է Տրամաբանական շեշտ իսկ նախադասութիւնները՝ շրջւած նախադասութիւններ. ՕՐԻՆԱԿ՝

Մայրը աղջկան սիրում է: (Կանոնւոր նախադասութիւն)

Մայրը աղջկա՛ն է սիրում:

Աղջկան մա՛յրն է սիրում:

Մա՛յրն է սիրում աղջկան:

Աղջկա՛ն է սիրում մայրը:

Աղջկան սիրում է մա՛յրը:

Բացայայտութեան նշանները

Գրածքի միտքը աւելի պարզելու համար, կետադրութեան և առոգանութեան նշաններից բացի, գործ ենք անում մի շարք այլ նշաններ, որոնք կոչւում են բացայայտութեան նշաններ:

Բացայայտութեան նշանները 8 հատ են՝ Չակերտ («») Փակագիծ () Կախման կետեր (...) Բազմակետ (.....) Անջատման գիծ (-) Գծիկ կամ միութեան գիծ (-) Ենթամնա կամ տողադարձի նշան (-) Ապարթաց ('):

Երբ ուրիշի խօսքն ամբողջութեամբ մէջ ենք բերում, դնում ենք Չակերտների «» մէջ. ՕՐԻՆԱԿ՝ ընտանի կենդանիները վիճում էին, կովն ասաց. «Ձեզանից ամենաօգտակարը ես եմ»: Չակերտների մէջ են դրում նաև ծաղրական մտքով գործածուած բառերը. ՕՐԻՆԱԿ՝ մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր կարդալ սովորեմ և «մարդ» դառնամ: Չակերտների մէջ են դրում նաև պայմանական անունները խօսքի մէջ յիշատակելու ժամանակ. ՕՐԻՆԱԿ՝ այդ ոգով են գրւած նրա մի շարք վեպերը, «Խենթը», «Զալալէդիկները»:

Փակագծի մէջ են դրում որևէ բացադրութիւն կամ ծանօթութիւն, որ եթէ դուրս բերւի գրւածքի իմաստը չի խախտւի. ՕՐԻՆԱԿ՝ գրերի գիւտը (ինչպես պատմում են հիգերրորդ դարի պատմիչները) փրկեց հայ ժողովրդին ձուլելու վտանգից:

Երբ բուն զգացմունք է տիրում և կամ խօսքն ընդհատւում է միտքը կիսատ է մնում դրում է կախման կետեր. ՕՐԻՆԱԿ՝ Սարգի՛ս, Սարգի՛ս ... թող Աստուած քեզ ... դու իմ հոգին կորցրիր ... դու ...

Բազմակետը (երեք կետից աւելի) դրում է մէջբերումներում կամ թէ խօսքի մի մասը դիտաւորեալ ձևով դուրս թողնելու ժամանակ: ՕՐԻՆԱԿ՝ «Բարձր սարեր, այ սարեր դուք էլ ինձ հետ»:

Անջատման գծով բաժանւում են իրարից սովորական հարց ու պատասխանները, կամ երբ ուրիշի խօսքերով ենք սկսում ասելիքը, նաև խօսքերի մէջ մեկակ կամ կետադրութեան որևէ մի նշանի հետ դրում է, երբ պետք է լինում ցոյց տալու, որ խօսքերն իրար հետ կապ չունեն. ՕՐԻՆԱԿ՝
- Պատրաստւեցէք, որ գրէք, - պատւիրեց ուսուցիչը:

Գծիկ կամ միութեան գիծը դրում է երկու անբաժանելի բառերի միջև. ՕՐԻՆԱԿ՝ աշակերտները խումբ-խումբ գնացին զբօսանքի:

Ենթամնայ կամ տողադարձ նշանը դրում է տողի վերջում, երբ տողադարձ է արւում կամ երբ բազմավանկ բառերը վանկ-վանկ գրւում են մի տողում:

Ապարդարը դրում է կրճատուած ձայնաւորի փոխարէն. ՕՐԻՆԱԿ՝ «Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կ'երթան»: